Արձանագրություն N 3

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2026/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով էլեկտրոնային աճուրդով ընթացակարգով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար շենքերի մաքրման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

17 ապրիլի 2026թ.
ժամը 10:30

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լևոն Հարությունյանը, անդամներ՝ Ռուզաննա Իսահակյանը, Սամվել Ալավերդյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2026/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման և ամփոփման մասին

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2026/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լևոն Հարությունյանը նիստը հայտարարեց բացված:

Հանձնաժողովը ուսումնասիրեց և պարզեց, որ Մերի Աշոտի Թովմասյան Ա/Ձ-ն ու ՌԻՄԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա/Ձ-ն սահմանված ժամկետում և կարգով շտկել են արձանագրված անհամապատասխանությունները, իսկ Կրիստնմո ՍՊԸ-ն չի շտկել:

Միաժամանակ ներկայացվեց ընթացակարգի մասնակից Ա/Ձ Մարգարիտա Հակոբյան-ի «herminehak77@mail.ru» էլեկտրոնային փոստից գնահատող հանձնաժողովի քարտուղար Ս.Հարությունյանի էլեկտրոնային փոստին ուղարկված (թիվ ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-2026/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված) նամակն (կցվում է) առ այն, որ Ա/Ձ Մարգարիտա Հակոբյան-ը 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով տեխնիկական վրիպակի արդյունքում 3 150 000 ՀՀ դրամի փոխարեն նշել է 315 000 ՀՀ դրամ, այսինքն՝ մեկ զրո թվանշան պակաս, և խնդրել է 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով գնային աճաջարկը համարել տեխնիկական վրիպակ և ՀՀ կառավարության 04.05.17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի հիման վրա հնարավորություն տալ այն շտկել կամ որպես հրավերի պահանջներին չհամապատասխանող՝ այսինքն գնման առարկայի գնման ինքնարժեքից ակնհայտ ցածր լինելու հիմքով 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով հայտը մերժել ու ընթացակարգը, վերոնշյալ չափաբաժինների մասով, հայտարարել չկայացած:

Հանձնաժողովն արձանագրեց, որ գնման ընթացակարգը կազմակեպվել է էլեկտրոնային աճուրդ ընթացակարգով, որի ընթացքում մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով՝ արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով համակարգը ավտոմատ արտացոլում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում հարկի գումարի ավտոմատ հաշվարկման նպատակով մասնակիցը պարտադիր կարգով գնային առաջարկում նշում է հարկի դրույքաչափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման: Մասնակցից չի կարող պահանջվել, որ նա ներկայացնի գնային առաջարկի հիմնավորումներ կամ որևէ այլ տիպի տեղեկություններ կամ փաստաթղթեր, ինչպես նաև մասնակցի շահույթի չափը չի կարող հրավերով սահմանափակվել:

Ներկայացված գնային առաջարկը գեներացվել է էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից, և նշված չափաբաժինների մասով Ա/Ձ Մարգարիտա Հակոբյան-ը որպես նվազ գին առաջարկած մասնակից համակարգի կողմից ճանաչվել է որպես ընտրված մասնակից նաև նշված չափաբաժինների մասով: Գործող օրենսդրության շրջանակներում, դիմումում բարձրացված հարցի կարգավորումների մասով հանձնաժողովը իրավասություններ չունի: Որպես դիմումի պատասխան մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկել հանձնաժողովի նիստի արձանագրությունը:

Հանձնաժողովի անդամների կողմից իրականացվեց հայտերի գնահատում, որի արդյունքում Ա/Ձ Մարգարիտա Հակոբյան-ի, Սոնա Մատինյան Արթուրի Ա/Ձ-ի, Մերի Աշոտի Թովմասյան Ա/Ձ-ի, ՌԻՄԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա/Ձ-ի և ԱՅԷՄ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ-ի հայտը գնահատվեց բավարար, իսկ Կրիստնմո ՍՊԸ-ի հայտը՝ անբավարար:

Հանձնաժողովը որոշեց՝

- Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ և հրավերի 8.15-րդ կետերը՝ Կրիստնմո ՍՊԸ-ի հայտը մերժել, վերջինիս վերաբերյալ նութերը ՀՀ կառավարության 04.05.17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 29-րդ ենթակետի և հրավերի 8.15-րդ կետի՝ ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն (լիազորված մարմին)՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետի ա) ենթակետի պահանջներին համապատասխան:

- Ընթացակարգը՝ 2-րդ չափաբաժնի մասով, հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն:

- 1-ին, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով համակարգի կողմից որպես առաջին տեղ զբաղեցրած ճանաչված մասնակից Ա/Ձ Մարգարիտա Հակոբյան-ին ճանաչել որպես ընտրված մասնակից նույն չափաբաժինների մասով:

- 3-րդ չափաբաժնի մասով համակարգի կողմից որպես առաջին տեղ զբաղեցրած ճանաչված մասնակից Մերի Աշոտի Թովմասյան Ա/Ձ-ին ճանաչել որպես ընտրված մասնակից նույն չափաբաժնի մասով:

- 4-րդ, 5-րդ և 10-րդ չափաբաժինների մասով համակարգի կողմից որպես առաջին տեղ զբաղեցրած ճանաչված մասնակից Սոնա Մատինյան Արթուրի ԱՁ-ին ճանաչել որպես ընտրված մասնակից նույն չափաբաժնի մասով:

- 9-րդ չափաբաժնի մասով համակարգի կողմից որպես առաջին տեղ զբաղեցրած ճանաչված մասնակից ՌԻՄԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա/Ձ-ին ճանաչել որպես ընտրված մասնակից նույն չափաբաժնի մասով:

- 6-րդ և 11-րդ չափաբաժինների մասով համակարգի կողմից որպես առաջին տեղ զբաղեցրած ճանաչված մասնակից ԱՅԷՄ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ-ին ճանաչել որպես ընտրված մասնակից նույն չափաբաժինների մասով:

-Հաշվի առնելով, որ սույն ընթացակարգով նախատեսված է անգործության ժամկետ, դրա ավարտից հետո Ա/Ձ Մարգարիտա Հակոբյան-ին, Մերի Աշոտի Թովմասյան Ա/Ձ-ին, Սոնա Մատինյան Արթուրի ԱՁ-ին, ՌԻՄԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա/Ձ-ին և ԱՅԷՄ ՀՈԼԴԻՆԳ ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ պահանջելով ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Լևոն Հարությունյան

անդամներ _____ Ռուզաննա Իսահակյան

_____ Սամվել Ալավերդյան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան